ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՄԱՐԶԱՍԱՐՔԵՐԸ ԵՎ ԽԱՂԱՍԱՐՔԵՐԸ) ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ/ԿԱՄ ՆՈՐ ՄԱՐԶԱՍԱՐՔԵՐՈՎ ԵՎ ԽԱՂԱՍԱՐՔԵՐՈՎ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/25

ք. Մասիս « 12 » սեպտեմբերի 2025թ.

Մասիս համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանի, որը գործում է համայնքի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՄԻԼ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Մասիս համայնքում առկա խաղահրապարակների (ներառյալ՝ մարզասարքերը և խաղասարքերը) նորոգման և/կամ նոր մարզասարքերով և խաղասարքերով կահավորման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում **ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/25** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 10 օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եաղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **44 280 000 (քառասունչորս միլիոն երկու հարյուր ութսուն հազար)** ՀՀ դրամ, որից 7 380 000 (յոթ միլիոն երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Ընդ որում կանխավճար հատկացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ ապահովել է շինարարության կազմակերպման աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումները՝ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է տվյալ շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների

հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1, N 5 և N 6 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Մասիսի համայնքապետարան	«ՄԻԼ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՊԸ
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4	Գ ՄԽՉՅԱՆ 2Փ. S30
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 220015590676000
Հ/Հ 900 432 206 028	ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
ՀՎՀՀ 04240324	ՀՎՀՀ 04239318
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« 12 » սեպտեմբերի 2025թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/25 ծածկագրով պայմանագրի

Ծավալաթերթ-նախահաշիվ
Մասիս համայնքում առկա խաղահրապարակների (ներառյալ՝ մարզասարքերը և խաղասարքերը) նորոգման և/կամ նոր մարզասարքերով և խաղասարքերով կահավորման աշխատանքների կատարման

<<	Հիմնավ.	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չ/Մ	Քանակը	միավորի գին հազ.դր	Ընդհանուրը (հազ. դրամ) 5x6
1	2	3	4	5	6	7
		Նոր թաղամաս 6				
1	E15-614	Մետաղե խաղերի ներկում հակակոռոզիոն ներկով	100 մ2	0,22	174,14	38,31
		Ընդամենը				38,31
		Նոր թաղամաս 29				
2	E15-614	Մետաղե ցանկապատի ներկում հակակոռոզիոն ներկով	100 մ2	1,02	174,14	177,62
		Ընդամենը				177,62
		Նոր թաղամաս 3				
3	E15-614	Մետաղե խաղերի ներկում հակակոռոզիոն ներկով	100 մ2	0,22	174,14	38,31
		Ընդամենը				38,31
		Նոր թաղամաս 22/13				
		նստարանների հիմքեր /8տեղ/				
4	E1-965	Գրունտի փորում հիմքերի տակ ձեռքով	մ3	1,60	6,15	9,84
5	E23-225 ԲԿՏՄ	Բարձում ինքնաթափի վրա ձեռքով 4.6մ3 կամ 14.06տն	տն	3,00	0,60	1,79
6	1տկմ=100 դր	Գրունտի տեղափոխում ավտոմեքենաներով մինչև 8կմ հեռավորության վրա, բեռնաթափում	տն	3,00	1,04	3,11
7	E23-3	Խճային շերտ հիմքերի տակ	մ3	0,32	10,15	3,25
8	E6-2	Հենասյուների միաձույլ բետոնե հիմքեր , B 15(200) դասի բետոն,	մ3	1,52	59,31	90,15
		Ընդամենը				108,14
		Նոր թաղամաս 17				
		նստարանների հիմքեր /8տեղ/				
9	E1-965	Գրունտի փորում հիմքերի տակ ձեռքով	մ3	1,60	6,15	9,84
10	E23-225 ԲԿՏՄ	Բարձում ինքնաթափի վրա ձեռքով 4.6մ3 կամ 14.06տն	տն	3,00	0,60	1,79
11	1տկմ=100 դր	Գրունտի տեղափոխում ավտոմեքենաներով մինչև 8կմ հեռավորության վրա, բեռնաթափում	տն	3,00	1,04	3,11
12	E23-3	Խճային շերտ հիմքերի տակ	մ3	0,32	10,15	3,25
13	E6-2	Հենասյուների միաձույլ բետոնե հիմքեր , B 15(200) դասի բետոն,	մ3	1,52	59,31	90,15
		Ընդամենը				108,14
		Նոր թաղամաս 32				
14	E8-11-1	Եզրաքարերի տակ խճային հարթեցնող շերտ 5սմ հաստ.. 0,01մ3/գծմx128գծմ=1,28մ3	մ3	1,28	9,32	11,93
15	E27-79	Բետոնե եզրաքարերի տեղադրում, 200x80մմ չափ., բետոն B-15, (M200) հիմքի վրա,	գծմ	128,0	4,48	573,53

16	E27-22-1	Խճային հարթեցնող շերտի իրականացում h=15սմ հաստ.130 մ2 կամ 20մ3	մ3	19,500	10,79	210,35
17	E27-38-2	Խճային շերտի իրականացում h=10սմ	մ2	130,00	1,13	146,46
18	E27-19	Ծածկույթի բետոնե սալիկների տակ մանրահատիկ լվացած ավազային շերտի իրականացում, 7 սմ հաստ.	մ3	9,10	10,57	96,16
19	E27-176	Բետոնե գունավոր սալիկներով ծածկույթ, մանրավազե հիմքի վրա հիմքի վրա, 6սմ հաստ. կարերի մանր ավազից լցոնումով	մ2	130,00	7,98	1037,04
		Ռետինե ծածկույթ				
20	E27-38-2	Խճային շերտի իրականացում h=10սմ	մ2	315,00	1,13	354,90
21	E11-11	Տարածքի ռետինե ծածկույթի տակ բետոնե նախապատրաստական շերտ մետաղե ցանցի վրա, B 12.5 (150) դասի բետոն, 10սմ հաստ.315մ2 կամ 31.5մ3	մ3	31,50	44,21	1392,66
22	E6-86	Տարածքի ծածկույթի բետոնի ամրանավորում, Вр150x150մմ 4/4մմ, 313.31մ2, 284կգ	տն	0,300	836,05	250,82
23	E11-89 E11-90 կիրարկ	Ռետինե փաթեթներով հատակների ծածկույթ, սև գույնի, 15մմ հաստ,	100մ2	3,1500	1502,59	4733,17
		Խաղասարքերի հենասյուների հիմքեր /12 տեղ/				
24	E1-965	Գրունտի փորում հիմքերի տակ ձեռքով	մ3	1,15	6,15	7,09
25	E23-225 ԲԿՏՄ	Բարձում ինքնաթափի վրա ձեռքով	տն	6,00	0,60	3,57
26	1տկմ=100 դր	Գրունտի տեղափոխում ավտոմեքենաներով մինչև 8կմ հեռավորության վրա, բեռնաթափում	տն	6,00	1,04	6,22
27	E1-967 E1-1184	Հետլիցք կուտակված գրունտով	մ3	1,54	1,83	2,81
28	E23-3	Խճային շերտ հիմքերի տակ	մ3	0,300	10,15	3,05
29	E6-2	Հենասյուների միաձույլ բետոնե հիմքեր , B 15(200) դասի բետոն,	մ3	1,00	59,31	59,31
30	C124-3-16	Ամրան A-III դասի Φ 16 մմ	տոն	0,154	430,30	66,27
		Միզամարգ			0,00	0,00
31	E1-1579	Էքսկավատորով կուտակված բուսահողի բարձում ավտոինքնաթափերի վրա շինհրապարակ տեղափոխելու համար	1000մ3	0,0683	377,74	25,78
32	1տկմ=100 դր	Բուսահողի տեղափոխում ինքնաթափով մինչև 5կմ բեռնաթափում,	տոն	81,90	0,65	53,03
33	E48-168 E48-169	Սեվահողի փռում և հարթեցում ձեռքով, սիզամարգերում,	100մ2	4,55	54,91	249,83
34	E48-214	Սերմերի ձեռքով ցանում	100մ2	4,55	36,95	168,11
		Ընդամենը				9452,09
		3-րդ թաղամաս 1-ին շենք				
35	E8-11-1	Եզրաքարերի տակ խճային հարթեցնող շերտ 5սմ հաստ.. 0,01մ3/գծմx127գծմ=1,27մ3	մ3	1,27	9,32	11,84
36	E27-79	Բետոնե եզրաքարերի տեղադրում, 200x80մմ չափ., բետոն B-15, (M200) հիմքի վրա,	գծմ	127,0	4,48	569,05
37	E27-22-1	Խճային հարթեցնող շերտի իրականացում h=15սմ հաստ.126	մ3	18,900	10,79	203,88

38	E27-38-2	Խճային շերտի իրականացում h=10սմ	մ2	126,00	1,13	141,96
39	E27-19	Ծածկույթի բետոնե սալիկների տակ մանրահատիկ լվացած ավազային շերտի իրականացում, 7 սմ հաստ.	մ3	8,82	10,57	93,20
40	E27-176	Բետոնե գունավոր սալիկներով ծածկույթ, մանրավազե հիմքի վրա հիմքի վրա, 6սմ հաստ. կարերի մանր ավազից լցոնումով	մ2	126,00	7,98	1005,13
		Ռետինե ծածկույթ				
41	E27-38-2	Խճային շերտի իրականացում h=10սմ	մ2	405,00	1,13	456,29
42	E11-11	Տարածքի ռետինե ծածկույթի տակ բետոնե նախապատրաստական շերտ մետաղե ցանցի վրա, B 12.5 (150) դասի բետոն, 10սմ հաստ.315մ2 կամ 31.5մ3	մ3	40,50	44,21	1790,56
43	E6-86	Տարածքի ծածկույթի բետոնի ամրանավորում, Вр150х150մմ 4/4մմ, 405մ2,	տն	0,500	836,05	418,03
44	E11-89 E11-90 կիրարկ	Ռետինե փաթեթներով հատակների ծածկույթ, սև գույնի, 15մմ հաստ,	100մ2	4,5000	1502,59	6761,67
		Միզամարգ				
45	E1-1579	էքսկավատորով կուտակված բուսահողի բարձում ավտոինքնաթափերի վրա շինհրապարակ տեղափոխելու համար	1000մ3	0,1305	377,74	49,30
46	1տկմ=100 դր	Բուսահողի տեղափոխում ինքնաթափով մինչև 5կմ բեռնաթափում,	տոն	156,60	0,65	101,40
47	E48-168 E48-169	Սեվահողի փռում և հարթեցում ձեռքով, սիզամարգերում,	100մ2	8,70	54,91	477,70
48	E48-214	Սերմերի ձեռքով ցանում	100մ2	8,70	36,95	321,43
		Ցանկապատ				
49	E1-965	Գրունտի մշակում ձեռքով, 22հատx0.054մ=1.4մ3	մ3	1,20	6,15	7,38
50	E23-225 ԲԿՏՄ	Բարձում ինքնաթափերի վրա	տն	2,22	0,60	1,32
51	Շուկա 1տնկմ= 100 դր.	Տեղափոխում 7կմ լցակույտ	տ	2,22	0,91	2,01
52	E6-13	Բետոնե սյունաձև հիմքեր B 15 (200) դասի բետոն	մ3	1,20	59,54	71,45
53	E7-319 կիրարկ	D3 ցանցով մետաղե ցանկապատի մոնտաժում, մետաղալարը 4 մմ հաստ. -D3 ցանցով մետաղե ցանկապատ, մետաղալարը 4 մմ հաստ. ամրացման դետալներով և հենասյուներով, 2.5մx1.43մ=3.575մ2x26հատ=93մ2	գծմ	55,00	12,65	695,87
		Ընդամենը				13179,48
		3-րդ թաղամաս 4-րդ շենք				
54	E15-614	Մետաղե խաղերի ներկում հակակոռոզիոն ներկով	100 մ2	0,22	174,14	38,31
		Ընդամենը				38,31
		3-րդ թաղամաս 9-րդ շենք				
55	E15-614	Մետաղե խաղերի ներկում հակակոռոզիոն ներկով	100 մ2	0,22	174,14	38,31
		Խաղասարքերի հենասյուների հիմքեր /12 տեղ/				
56	E1-965	Գրունտի փորում հիմքերի տակ ձեռքով	մ3	1,15	6,15	7,09
57	E23-225 ԲԿՏՄ	Բարձում ինքնաթափի վրա ձեռքով	տն	6,00	0,60	3,57
58	1տկմ=100 դր	Գրունտի տեղափոխում ավտոմեքենաներով մինչև 8կմ հեռավորության վրա, բեռնաթափում	տն	6,00	1,04	6,22

59	E1-967 E1-1184	Հետլիցք կուտակված գրունտով	մ3	1,54	1,83	2,81
60	E23-3	Խճային շերտ հիմքերի տակ	մ3	0,300	10,15	3,05
61	E6-2	Հենասյուների միաձույլ բետոնե հիմքեր , B 15(200) դասի բետոն,	մ3	1,00	59,31	59,31
62	C124-3-16	Ամրան A-III դասի Φ 16 մմ	տոն	0,154	430,30	66,27
		Ընդամենը				186,62
		3-րդ թաղամաս 6-րդ շենք				
63	E15-614	Մետաղե խաղերի ներկում հակակոռոզիոն ներկով	100 մ2	0,22	174,14	38,31
		Խաղասարքերի հենասյուների հիմքեր /12 տեղ/				
64	E1-965	Գրունտի փորում հիմքերի տակ ձեռքով	մ3	1,15	6,15	7,09
65	E23-225 ԲԿՏՄ	Բարձում ինքնաթափի վրա ձեռքով	տն	6,00	0,60	3,57
66	1տկմ=100 դր	Գրունտի տեղափոխում ավտոմեքենաներով մինչև 8կմ հեռավորության վրա, բեռնաթափում	տն	6,00	1,04	6,22
67	E1-967 E1-1184	Հետլիցք կուտակված գրունտով	մ3	1,54	1,83	2,81
68	E23-3	Խճային շերտ հիմքերի տակ	մ3	0,300	10,15	3,05
69	E6-2	Հենասյուների միաձույլ բետոնե հիմքեր , B 15(200) դասի բետոն,	մ3	1,00	59,31	59,31
70	C124-3-16	Ամրան A-III դասի Φ 16 մմ	տոն	0,154	430,30	66,27
		Ընդամենը				186,62
		Նորաբաց				
		Միզամարգ				
71	E1-1579	էքսկավատորով կուտակված բուսահողի բարձում ավտոինքնաթափերի վրա շինհրապարակ տեղափոխելու համար	1000մ3	0,0033	377,74	1,25
72	1տկմ=100 դր	Բուսահողի տեղափոխում ինքնաթափով մինչև 5կմ բեռնաթափում,	տոն	3,96	0,65	2,56
73	E48-168 E48-169	Սեվահողի փռում և հարթեցում ձեռքով, սիզամարգերում,	100մ2	1,25	54,91	68,64
74	E48-214	Սերմերի ձեռքով ցանում	100մ2	1,25	36,95	46,18
75	E15-614	Մետաղե խաղերի ներկում հակակոռոզիոն ներկով	100 մ2	0,22	174,14	38,31
		Ընդամենը				156,94
		Դաշտավան				
76	E15-614	Մետաղե խաղերի ներկում հակակոռոզիոն ներկով	100 մ2	0,22	174,14	38,31
		Ընդամենը				38,31
		Միփանիկ				
77	E15-614	Մետաղե խաղերի ներկում հակակոռոզիոն ներկով	100 մ2	0,22	174,14	38,31
		Ընդամենը				38,311
		Հայանիստ				
		Խաղասարքերի հենասյուների հիմքեր /12 տեղ/				
78	E1-965	Գրունտի փորում հիմքերի տակ ձեռքով	մ3	1,15	6,15	7,09
79	E23-225 ԲԿՏՄ	Բարձում ինքնաթափի վրա ձեռքով	տն	6,00	0,60	3,57
80	1տկմ=100 դր	Գրունտի տեղափոխում ավտոմեքենաներով մինչև 8կմ հեռավորության վրա, բեռնաթափում	տն	6,00	1,04	6,22
81	E1-967 E1-1184	Հետլիցք կուտակված գրունտով	մ3	1,54	1,83	2,81

82	E23-3	Խճային շերտ հիմքերի տակ	մ3	0,300	10,15	3,05
83	E6-2	Հենասյուների միաձույլ բետոնե հիմքեր , B 15(200) դասի բետոն,	մ3	1,00	59,31	59,31
84	C124-3-16	Ամրան A-III դասի Φ 16 մմ	տոն	0,154	430,30	66,27
		Ընդամենը				148,312
		Նիզամի				
85	E15-614	Մետաղե խաղերի ներկում հակակոռոզիոն ներկով	100 մ2	0,22	174,14	38,31
		Ընդամենը				38,311
		Սիս				
86	E8-11-1	Եզրաքարերի տակ խճային հարթեցնող շերտ 5սմ հաստ.. 0,01մ3/գծմx80գծմ=0,8մ3	մ3	1,00	9,32	9,32
87	E27-79	Բետոնե եզրաքարերի տեղադրում, 200x80մմ չափ., բետոն B-15, (M200) հիմքի վրա,	գծմ	80,0	4,48	358,46
88	E27-22-1	Խճային հարթեցնող շերտի իրականացում h=15սմ հաստ.80	մ3	12,000	10,79	129,45
89	E27-38-2	Խճային շերտի իրականացում h=10սմ	մ2	80,00	1,13	90,13
90	E27-19	Ծածկույթի բետոնե սալիկների տակ մանրահատիկ լվացած ավազային շերտի իրականացում, 7 սմ հաստ.	մ3	5,60	10,57	59,18
91	E27-176	Բետոնե գունավոր սալիկներով ծածկույթ, մանրավազե հիմքի վրա հիմքի վրա, 6սմ հաստ. կարերի մանր ավազից լցոնումով	մ2	80,00	7,98	638,18
		Ռետինե ծածկույթ				
92	E27-38-2	Խճային շերտի իրականացում h=10սմ	մ2	90,00	1,13	101,40
93	E11-11	Տարածքի ռետինե ծածկույթի տակ բետոնե նախապատրաստական շերտ մետաղե ցանցի վրա, B 12.5 (150) դասի բետոն, 10սմ հաստ.315մ2 կամ 31.5մ3	մ3	9,00	44,21	397,90
94	E6-86	Տարածքի ծածկույթի բետոնի ամրանավորում, Вр150x150մմ 4/4մմ,	տն	0,300	836,05	250,82
95	E11-89 E11-90 կիրարկ	Ռետինե փաթեթներով հատակների ծածկույթ, սև գույնի, 15մմ հաստ,	100մ2	0,9000	1502,59	1352,33
		Սիզամարգ				
96	E1-1579	էքսկավատորով կուտակված բուսահողի բարձում ավտոինքնաթափերի վրա շինհրապարակ տեղափոխելու համար	1000մ3	0,1305	377,74	49,30
97	1տկմ=100 դր	Բուսահողի տեղափոխում ինքնաթափով մինչև 5կմ բեռնաթափում,	տոն	156,60	0,65	101,40
98	E48-168 E48-169	Սեվահողի փռում և հարթեցում ձեռքով, սիզամարգերում,	100մ2	8,70	54,91	477,70
99	E48-214	Սերմերի ձեռքով ցանում	100մ2	8,70	36,95	321,43
		Զրուցարան, 1 հատ				
100	E1-1588	IV կարգի բնահողի մշակում էքս. 0,65 մ3 շ.տ. բարձում ա/ինքնաթափ մեքենաների վրա	$մ^3$	1,5	0,82	1,22
101	1տկմ=100 դր	Տեղափոխում լցակույտ 5կմ	տ	2,70	0,65	1,75
102	E6-21	Խամքարաբետոնե հիմքերի կառուցում B 12.5 (150) դասի բետոն	մ3	1,50	44,29	66,43
103	E11-6	Խճային նախապատրաստական շերտի իրականացում, 110սմ հաստ.,	մ3	36,08	17,09	616,75

104	E6-1	Բետոնե նախապատրաստական շերտ մետաղե ցանցի վրա B15(M 200), 10սմ հաստ.,	մ3	3,28	39,94	131,00
105	E6-86	Նախապատրաստական շերտի ամրանավորում, ամրան A-Iդասի Φ 6մմ,	տն	0,073	416,81	30,57
106	E8-11-1	Եզրաքարերի տակ խճային հարթեցնող շերտ 5սմհաստ..	մ3	0,137	9,32	1,27
107	E27-78	Բետոնե եզրաքարերի շարում ՝ բետոնե հիմքի վրա, բետոն B-15, 300x100մմ չափ.	գծմ	13,8	6,71	92,35
108	E27-22-1 կիրարկ.	Բետոնե սալիկների տակ ավազացեմենտային չոր խառնուրդի փռում, h=30մմ հաստ. 70% բազալտե ավազ՝ 0-5մմ ֆրակցիայի և 30% ցեմենտ,	մ3	0,984	60,42	59,46
109	E27-176	Զրուցարանների հատակների ծածկույթ բետոնե 4սմ հաստ. սալիկներով , ավազացեմենտային չոր խառնուրդի վրա	մ2	32,80	11,32	371,24
		Զրուցարանի մետաղե կարկաս, 1հատ				
110	E9-207 շուկա	1 հատ մետաղական զրուցարանների կարկասի պատրաստում և մոնտաժում ՝ - Մետաղե քառակուսի խողովակ՝ 70x70x5մմ 15,75գծմ - 0,173տն - Մետաղե ուղղանկյուն խողովակ՝ 70x50x5մմ 33,6գծմ -0,317տն - Մետաղե քառակուսի խողովակ՝ 30x30x2մմ 9.8գծմ - 0.018տն - Մետաղե քառակուսի խողովակ՝ 40x40x2մմ 43,3գծմ - 0.11տն	տոն	0,618	641,93	396,71
111	E15-615	Մետաղական մասերի հակակոռոզիոն ներկում	100 մ2	0,210	124,93	26,24
112	E9-24 կիրարկ	Զրուցարանների կտուրի ծածկույթ գունավոր մետաղե թիթեղով, 0.55մմ հաստ КП25-0,55	100մ2	0,147	727,82	106,99
		Զրուցարանի նստարան, 1հատ			0,00	0,00
113	E9-207 շուկա	1հատ նստարանների մետաղական կարկասի պատրաստում և մոնտաժում ՝ - Մետաղե ուղղանկյուն խողովակ՝ 60x30x2,5մմ 5,6գծմ - 0,019տն - Մետաղե ուղղանկյուն խողովակ՝ 50x30x2մմ 27,4գծմծմ -0,064տն - Ամրան A- IIIդասի Φ 18մմ, 0.003տն	տոն	0,086	672,50	57,83
114	E15-615	Մետաղական մասերի հակակոռոզիոն ներկում	100 մ2	0,053	124,85	6,62
115	E10-28 կիրարկ	Նստարանների նստատեղերի ռանդված փայտե ծածկույթ, փայտե ռանդված տախտակ՝100x30մմ 0.06մ3	մ3	0,060	241,18	14,47
116	E15-641 կիրարկ	Նստարանների նստատեղերի ռանդված փայտե ծածկույթի երկտակ լաքապատում	100մ2	0,060	220,31	13,22
		Զրուցարանի սեղաններ, 1հատ				

117	E9-207 շուկա	1 հատ մետաղական զրուցարանների սեղանի կարկասի պատրաստում և մոնտաժում՝ - Մետաղե ուղղանկյուն խողովակ՝ 70x50x3մմ 7,6գծմ - 0,045տն - Մետաղե ուղղանկյուն խողովակ՝ 50x30x3մմ 8,4գծմ - 0,032տն - Մետաղե թիթեղ՝ 200x200x5մմ 0,04մ2=0,12մ2գծմ - 0.004տն	տոն	0,081	654,62	53,02
118	E15-615	Մետաղական մասերի հակակոռոզիոն ներկում	100 մ2	0,040	124,93	5,00
119	E10-28 կիրարկ	Նստարանների նստատեղերի ռանդված փայտե ծածկույթ, փայտե ռանդված տախտակ՝150x50մմ	մ3	0,100	241,19	24,12
120	E15-641 կիրարկ	Նստարանների նստատեղերի ռանդված փայտե ծածկույթի երկտակ լաքապատում	100մ2	0,04	220,31	8,81
		Խաղասարքերի հենասյուների հիմքեր /18տեղ/				
121	E1-965	Գրունտի փորում հիմքերի տակ ձեռքով	մ3	1,73	6,15	10,63
122	E23-225 ԲԿՏՄ	Բարձում ինքնաթափի վրա ձեռքով	տն	6,00	0,60	3,57
123	1տկմ=100 դր	Գրունտի տեղափոխում ավտոմեքենաներով մինչև 8կմ հեռավորության վրա, բեռնաթափում	տն	6,00	1,04	6,22
124	E1-967 E1-1184	Հետլիցք կուտակված գրունտով	մ3	2,30	1,83	4,20
125	E23-3	Խճային շերտ հիմքերի տակ	մ3	0,450	10,15	4,57
126	E6-2	Հենասյուների միաձույլ բետոնե հիմքեր , B 15(200) դասի բետոն,	մ3	1,50	59,31	88,97
127	C124-3-16	Ամրան A-III դասի Φ 16 մմ	տոն	0,231	430,30	99,40
		Ընդամենը				6639,628
		Մասիս համայնքի կենտրոնական հրապարակի այգի				
		Ոռոգման ծածկույթ				
128	E27-38-2	Խճային շերտի իրականացում h=10սմ	մ2	110,00	1,13	123,93
129	E11-11	Տարածքի ոռոգման ծածկույթի տակ բետոնե նախապատրաստական շերտ մետաղե ցանցի վրա, B 12.5 (150) դասի բետոն, 10սմ հաստ.	մ3	11,00	44,21	486,33
130	E6-86	Տարածքի ծածկույթի բետոնի ամրանավորում, Вр150x150մմ 4/4մմ,	տն	0,284	836,05	237,44
131	E11-89 E11-90 կիրարկ	Ոռոգման փաթեթներով հատակների ծածկույթ, սև գույնի, 15մմ հաստ,	100մ2	1,1000	1502,59	1652,85
		Ընդամենը				2500,549
		Ընդամենը				33074,009
		Կահավորում				
		Նոր թաղամաս 22/13				
1	Շուկա	Նստարան	հատ	4	90,00	360
		Նոր թաղամաս 17				
2	Շուկա	Նստարան	հատ	4	90,00	360
3	Kidsports	Խաղային համալիր , կոդ՝ 101.06.09	հատ	1,0	1980,00	1980
4	Kidsports	Խաղային համալիր , կոդ՝ 101.06.09	հատ	1,0	1980,00	1980
5	Kidsports	Խաղային համալիր , կոդ՝ 101.06.09	հատ	1,0	1980,00	1980

6	Kidsports	Խաղային համալիր , կոդ՝ 101.06.09	հատ	1,0	1980,00	1980
7	Kidsports	Խաղային համալիր , կոդ՝ 101.06.09	հատ	1,0	1980,00	1980
8	Kidsports	Պտտակառուսել	հատ	1,0	330,00	330
9	Kidsports	Հավասարակշիռ	հատ	1,0	576,00	576
		Ընդամենը				11526,000
		ԸՆԴԱՄԵՆԸ				44600,009
		ԸՆԴԱՄԵՆԸ				44600,009
		ԱԱՀ-20%				8920,002
		ԸՆԴՀԱՆՈՒՐԸ				53520,011

Կապալառուն պետք է ունենա սույն պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման օրենսդրությամբ նախատեսված իրավասություն (<<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքով նախատեսված լիցենզիաներ և ներդիրներ), ինչպես նաև պետք է բավարարի նախագծով աշխատանքային ռեսուրսների և մեքենա-մեխանիզմների համար սահմանված նվազագույն պահանջներին (եթե այդպիսիք նախատեսված են):

Կապալառուն պետք է ունենա շինարարության իրականացման 1-ին, 2-րդ կամ 3-րդ դասի լիցենզիա՝ հետևյալ ներդիրով.

- **Բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ (03.04)՝ 1-ին, 2-րդ կամ 3-րդ կարգի ներդիր, հավաստագիր:**

Աշխատանքները կատարվելու են Մասիս համայնքի վարչական տարածքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 206 028
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
L.S

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՄԻԼ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՊԸ
Գ ՄԽՉՅԱՆ 2Փ. S30
Հ/Հ 220015590676000
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
ՀՎՀՀ 04239318

/ստորագրություն/

Հավելված թիվ 2
« 12 » սեպտեմբերի 2025թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/25 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Մասիս համայնքում առկա խաղահրապարակների (ներառյալ՝ մարզասարքերը և խաղասարքերը) նորոգման և/կամ նոր մարզասարքերով և խաղասարքերով կահավորման աշխատանքների կատարման

Հ/Հ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Մասիս համայնքում առկա խաղահրապարակների (ներառյալ՝ մարզասարքերը և խաղասարքերը) նորոգման և/կամ նոր մարզասարքերով և խաղասարքերով կահավորման աշխատանքներ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 206 028
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՄԻԼ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՊԸ
Գ ՄԽՉՅԱՆ 2Փ. S30
Հ/Հ 220015590676000
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
ՀՎՀՀ 04239318

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 12 » սեպտեմբերի 2025թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/25 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142	Մասիս համայնքում առկա խաղահրապարակների (ներառյալ՝ մարզասարքերը և խաղասարքերը) նորոգման և/կամ նոր մարզասարքերով և խաղասարքերով կահավորման աշխատանքներ									... %	... %	... %	... %	... %

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 206 028
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՄԻԼ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՊԸ
Գ ՄԽՉՅԱՆ 2Փ. S30
Հ/Հ 2200[illegible]6000
[illegible]
ՀՎՀՀ 04233318

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 6
« 12 » սեպտեմբերի 2025թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/25 ծածկագրով պայմանագրի

ՀԱՎԱՍՏՈՒՄ

իրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին

<<ՄԻԼ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ-ն հավաստում է, որ ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/25 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում պարտավորվում է տեղադրել (օգտագործել) պայմանագրին կից ներկայացված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութեր և (կամ) սարքեր ու սարքավորումներ՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՄԻԼ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՊԸ
Գ ՄԽՉՅԱՆ 2Փ. Տ30
Հ/Հ 220015590676000
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
ՀՎՀՀ 04239318
/ստորագրություն/
Կ.Տ